ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի հունիսի 2-ի N 102 հրամանի պահանջներից, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի սեփականության 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի սեփականության 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2024 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի ենթադրում: